

Մ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
ՂԱՐԱԲԱՂԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Յուլիս 24-ի «Միլիոն»-ը առաջին էջի լուրով մը կը յայտնէ թէ «մահափորձերու հայ կաղմակերպիչը ներկայիս հրամանատար է Ղարաբաղի մէջ»: Սօսքը կը վերաբերի Մոնթէ Մելքոնեանի որուն նկարն ալ հրատարակուած է լուրին քով. կ'ըսուի որ 1980-էն ի վեր Մ. Մելքոնեանի անունը առնչուած էր Ա.Թէնքի, Հոոմէ ապա Փարիզի թուրք բարձրաստիճան պաշտօնատարներու դէմ սարքուած մահափորձներուն, ան պատկանած ըլլալով «Ասալա»-ի:

«Միլիոն»-ի Բաքուի աղբիւրով տըրւած լուրը կը յայտնէ տակաւին թէ Մ. Մելքոնեան Փարիզի մէջ երեք տարի առաջ բանտէն ազատ արձակուելէ ետք միջոց մը Եմէն ապրած, ապա Հայաստան անցնելով հրամանատար կարգուած էր Ղարաբաղի հայկական ուժերուն:

Բաքուի տեղեկատուութեան համաձայն, հայկական ուժերուն մէջ մեծ թիւով «Ասալա»-ի մարտիկներ կան ոչ ոք զանազան երկիրներու քաղաքացի են. անոնք Երբեմն չեն հնազանդիր երկրին վարիչներուն ու կը կաղմակերպեն ոճրային արարքներ, կողոսխուտներ եւայլն:

**

Իրաքի դէմ զինեալ նոր միջոցառումի մը սպասումը իր վիճակին լքած է երկրին հիւսիսային շրջանին քարիւղի պաշարները որոնք Քիւրտերու ձեռքը կը դանուին: Տաքերու պատճառով քարիւղը կը ժայթքէ ու կը հոսի անմշակ հողին վրայ: